

**Հիմնադիր և հրատարակիչ՝**

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

**Խմբագրական խորհուրդ՝**

**Նիկոլայ Առուստամյան - (Նախագահ)**  
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

**Աշոտ Հայրապետյան -** «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրեն

**Վոլոդյա Հովհաննիսյան -** Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Ռուզաննա Հակոբյան -** Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Կարեն Մարդարյան -** Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Գրիգոր Բաղիրյան -** Հայաստանում Ֆրանսիական համալսարանի հիմնադրամի իրավաբանական ֆակուլտետի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր

**Ստեփան Ծաղիկյան -** Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գառնիկ Մաֆարյան -** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փոխլստփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

---

**Համարի վրա աշխատել են՝**

Սեդա Գինոսյանը, Արսեն Ալոյանը

---

**Համարի պատասխանատու՝**

**Գուրգեն Աֆրիկյան -** իրավաբանական գիտությունների թեկնածու

---

**Խմբագիր՝** Գրիգոր Սինասյան - իրավաբանական գիտությունների թեկնածու

**Սրբագրիչ՝** Մանյա Փաշինյան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**1. ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ**  
Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները սահմանադրական փոփոխություններից հետո.....1

**2. ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**  
Իրավաբանական անձանց պետական գրանցումը.....5

**3. ՀԵՂԻՆԵ ԳՅՈՒՆԱԶԱՐՅԱՆ**  
Հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունության իրավական խոչընդոտները.....19

**4. ГУРГЕН АФРИКЯН**  
Организация и структура Конституционного Суда РА (Сравнительный анализ) .....24

**5. АННА КУРДОВА**  
Ускоренный порядок рассмотрения дел судом в УПК РА - дань моде или практическая необходимость?.....31

**6. ВАЧЕ СИМОНЯН**  
Некоторые научно-практические вопросы убийства матерью новорожденного ребенка (с. 106 УК РФ).....42

**7. GEORGI KUTOYAN**  
To the issue of the status of the Nagorno-Karabakh.....49

---

8. Միջազգային գիտագործնական կոնֆերանս.....53

9. Սևմինար-խորհրդակցություն.....54

10. Փորձագիտական քննարկում.....55

11. ՀՀ արդարադատության նախարարը հանդիպել է ցմահ ազատազրկում կրող դատապարտյալների հետ.....56

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ **հասցեն՝** ք.Երևան, Մ.Խորենացի 162<sup>ա</sup> **գրանցման վկայական -** N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Լրկրոնու տարածքային բաժնի կողմից

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ.Խորենացի 162<sup>ա</sup>, հեռախոս 574406  
Ֆաքս 574453 Էլ. փոստ [lawinstitute@justice.am](mailto:lawinstitute@justice.am)

**ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ**

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ տնօրենի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու



**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ**

2005թ. նոյեմբերի 27-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները և լրացումները վերաբերվում էին ինչպես մարդու իրավունքների և ազատությունների կոնկրետացմանը, սահմանադրական կարգի հիմունքների ինստիտուտի վերանայմանը, այնպես էլ՝ ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության իրավական կարգավիճակին:

Կարելի է ասել, որ կատարված փոփոխություններն ու լրացումները որոշակի հստակաբյուն մտքին վերը հիշատակված մարմինների կազմակերպչաիրավական փոխհարաբերություններում, մասնավորապես, կառավարության ձևավորման և գործունեության բնագավառում:

Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները ՀՀ-ում միասնական պետական իշխանությունն իրականացվում էր իշխանությունների երեք թևի բաժանման սկզբունքի հիման վրա, ապա փոփոխություններից հետո այդ հիմնարար դրույթը լրացվեց բավականին կարևոր պայմանով, խոսքը երեք թևի հավասարակշռման մասին է<sup>1</sup>: Հավասարակշռման ինստիտուտի ներդրումը Սահմանադրության մեջ ոչ միայն նպաստում է խուսափել մեկ իշխանական մարմնի ձեռքում իշխանության կենտրոնացումից, այլև հանդիսանում է կարևորագույն նախադրյալ վերջինիս կողմից կամայական գործառույթների իրականացումը կանխելու նպատակով:

Ըստ էության, նշված խնդիրների հստակեցման գործում հիմնական երաշխավորը Հանրապետության Նախագահն է, որը հետևում է Սահմանադրության պահպանմանը և ապահովում է իշխանության տարբեր թևերի բնականոն գործունեությունը: Բնդ որում ՀՀ Նախագահը, ՀՀ Ազգային ժողովի և կառավարության միջև հավասարակշռումն ապահովում է զսպումների և հակակշիռների համակարգի օգնությամբ: Այսպես՝ երբ Ազգային ժողովը կառավարությանը հայտնում է անվստահություն, ապա Նախագահը կարող է սահմանված կարգով արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություններ, ինչպես նաև հետաձգվող վետո դնել օրինագծերի ընդունման վրա: Նշված մարմինների գործունեության հավասարակշռումն ապահովելու գործում Հանրապետության Նախագահը, սահմանադրական բարեփոխումների արդյունքում, հանդես է գալիս նոր՝ պետության գլխի կարգավիճակով<sup>2</sup>: Սակայն, Ազգային ժողովը կարող է պաշտոնանկ անել Նախագահին, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ հաղթահարել նախագահի վետոն: Կառավարությունն իր հերթին կարող է վերը հիշատակված հարցերի վերաբերյալ ընդունել համապատասխան միջոցներ, որոնք նպատակ են հետապնդում սահմանափակել Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունները (այսպես՝ հոդվածներ 74.1 և 75):

Ի հաստատում վերը նշվածի, 2005թ. ՀՀ Սահմանադրության մեջ առավել հակիրճ ամրագրված է 55-րդ հոդվածի 3-րդ կետը. Հանրապետության Նախագահը «Սահմանադրության 74.1 հոդվածով սահմանված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը և նշանակում է արտա-հերթ ընտրություններ»<sup>3</sup>:

Եթե Սահմանադրության 74.1 հոդվածը Հանրապետության Նախագահին ուղղակիորեն վերապահում է Ազգային ժողովը արձակելու իրավունք, ապա, կրկնորդ մասի համաձայն, Հանրապետության Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը վերջինիս նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ: Իսկ 1995թ. ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Նախագահը կարող էր արձակել Ազգային ժողովը վարչապետի և Ազգային ժողովի նախագահի հետ խորհրդակցելուց հետո միայն: Սակայն, ըստ կուրսային, վարչապետի և Ազգային ժողովի նախագահի կարծիքները Նախագահի համար պարտադիր չէին, նա կարող էր արձակել Ազգային ժողովը նույնիսկ հակառակ նրանց արտահայտած կարծիքների (նման կարգավորում է տրվում այս ինստիտուտին նաև Ֆրանսիայի և Թուրքիայի Սահմանադրություններում):

Սակայն այդքան էլ ճիշտ չէր լինի ասել, որ ՀՀ Նախագահն ուներ Ազգային ժողովն արձակելու բացարձակ իրավունք<sup>4</sup>: Խորհրդարանի արձակումը հանդիսանում է պառլամենտական և կիսանախագահական կառավարման ձև ունեցող պետություններում գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև ծագած կոնֆլիկտը լուծելու կարևորագույն միջոցներից մեկը<sup>5</sup>: Ավելին, այն հանդիսանում է պառլամենտի առջև կառավարության պատասխանատվությանը հակադրող միջոց:

Բերևոք մի քանի օրինակներ տարբեր պետությունների սահմանադրաիրավական պրակտիկայից: Օրինակ՝ Իտալիայի Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն, Հանրապետության Նախագահը, խորհրդակցելով պալատների նախագահների հետ, կարող է արձակել երկու պալատները կամ՝ դրանցից մեկը: Համաձայն Ֆրանսիայի Սահմանադրության 12-րդ հոդվածի. «Հան-

րապետության Նախագահը կարող է վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը»:

Բերված երկու օրինակներում էլ նախագահների՝ պառլամենտը արձակելու իրավասությունը չի սահմանափակվում: Սակայն այստեղ խոսքը միայն ուղղակի սահմանափակման մասին է: Օրինակ՝ հենց Իտալիայի Նախագահի կողմից ընդունված ակտերը ենթակա են համապատասխան նախարարների կողմից կոնտրասիգնացիայի, հետևաբար, նաև պառլամենտի արձակման հարցը լուծվում է կառավարության կողմից:

Սակայն, երկրների մեծամասնությունում, որտեղ առկա է և կիրառվում է արձակման ինստիտուտը, այն սահմանափակվում է որոշակի պայմաններով:

Այսպես՝ Գերմանիայի Հիմնական օրենքի համաձայն՝ դաշնային նախագահը կարող է արձակել Բունդեստագը հետևյալ դեպքերում.

1) եթե Բունդեստագը 21 օրվա ընթացքում չի ընտրում դաշնային կանցլեր իր անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ,

2) Դաշնային կանցլերի ներկայացմամբ, եթե Բունդեստագը իր անդամների ձայների մեծամասնությամբ վստահություն չի հայտնել դաշնային կանցլերին:

Մեր համոզմամբ, պառլամենտը արձակելու իրավասության կոնկրետ սահմանափակումների նախատեսումը, նախ, կախված է պետական կառավարման ձևից: Սակայն, բացի կառավարման ձևից անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ երկրի սահմանադրական սովորույթները և ավանդույթները: Օրինակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում ղեռնա նոր են ձևավորվում նման ավանդույթներ, անհրաժեշտ է նախատեսել առավել խիստ ռեժիմ՝ Սահմանադրությամբ հասուկ ամրագրելով այն դեպքերը, որոնց առկայության դեպքում Նախագահը կարող է արձակել խորհրդարանը: Իսկ նման ավանդույթները կարող են ձևավորվել հետագա սահմանադրաիրավական պրակտիկայի արդյունքում: 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության ընդունման ժամանակ որպես

հիմք ընդունվել է Ֆրանսիայի Սահմանադրությունը՝ առանց հաշվի առնելու Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները: ՀՀ Նախագահի լիազորությունները վերանայվել են սահմանադրական փոփոխությունների ընթացքում: Սակայն, ամեն դեպքում Նախագահի՝ Ազգային ժողովն արձակելու իրավասությունը բացարձակ չէ, այն սահմանափակված է որոշակի հիմքերով, ինչը, մեր կարծիքով, հանդիսանում է առաջադիմական քայլ՝ ՀՀ սահմանադրական կարգի հիմունքների հաստատման և ամրապնդման գործընթացում: Նախագահի ոչնչով չսահմանափակված՝ Ազգային ժողովը արձակելու իրավասությունը կարող է հանգեցնել այդ իրավասության կամայական կիրառման և երկիրը կանգնեցնել անտեղի քաղաքական ճգնաժամերի առջև:

Այսպես՝ 74.1 հոդվածի առաջին մասը սահմանում է հետևյալ պայմանը, որի առկայության դեպքում ՀՀ Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը. «...եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու անսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին»:

Սկզբունքորեն սա հանդիսանում է հենց իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքից բխող լիազորություն, որի օգնությամբ ՀՀ Նախագահը կարողանում է ապահովել պետական իշխանության մարմինների համակարգի անխափան գործունեությունը: Սա, փաստորեն, այն դեպքն է, երբ խորհրդարանի կողմից անվստահություն է դրսևորվում կառավարության նկատմամբ: Սակայն, պետք է փաստել, որ Ազգային ժողովի արձակելը այլևս էլ ճիշտ չէ երկրի ներսում քաղաքական կայունության ապահովման տեսանկյունից: Այդ պատճառով էլ Նախագահի կողմից նման լիազորության իրականացումը պետք է չափազանց պատճառաբանված լինի և բխի տվյալ պահի քաղաքական-հասարակական իրողությունից:

Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է երեք դեպք, որոնց դեպքում ՀՀ Նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ.

ա) Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ, բ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում, գ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում: Նշված հիմքերից առաջինն է, որ անմիջականորեն վերաբերվում է կառավարության գործունեությանը, իսկ վերջին երկու հիմքերն ավելի շատ վերաբերվում են խորհրդարանի անգործությանը, ինչը, կարելի է ասել, միջոց է «չաշխատող» պառլամենտից ազատվելու համար: Խոսելով առաջին հիմքի մասին՝ Ազգային ժողովի հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ որոշում չկայացնելը, պետք է նշել, բավականին խիստ մոտեցում է: Գտնում ենք, որ այս հիմքի դեպքում անհրաժեշտ է նախ կիրառել նախնական կանխիչ միջոցառումներ մինչև բուն արձակելու քայլ կատարելը:

Սակայն, չպետք է մոռանալ, որ, 74.1 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, Նախագահի կողմից Ազգային ժողովը չի կարող արձակվել, եթե չկա այդ հոդվածում հիշատակված սուբյեկտներից որևէ մեկի առաջարկությունը, իսկ նման առաջարկության դեպքում Նախագահը կարող է նաև չարձակել Ազգային ժողովը: 1995թ. խմբագրության Սահմանադրությամբ չէին սահմանվում Ազգային ժողովի արձակման կոնկրետ հիմքեր, սակայն, նախատեսվում էին մի շարք սահմանափակումներ. Հանրապետության Նախագահը չէր կարող արձակել Ազգային ժողովը՝ ա) իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում, բ) նորընտիր Ազգային ժողովի ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում: Վերը հիշատակված երկու հիմքերը ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսվեցին: Սակայն, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, այն հիմնական և կարևոր սահմանափակումը, որը, մեր կար-



ծիրով, չէր կարելի չնախատեսել. Ազգային ժողովը չի կարող արձակվել ռազմական և արտակարգ դրության ժամանակ: Արդեն վերը ընդգծեցինք, որ խորհրդարանի արձակման ինստիտուտը բավականին լուրջ գործիք է և դրա կիրառումը, ավելի ճիշտ ոչ տեղին կիրառումը, կարող է հանգեցնել ներքաղաքական անկայուն իրադրության, այդ իսկ պատճառով այն արգելվում է ռազմական և արտակարգ դրության ժամանակ: Պետում ենք, որ Ազգային ժողովի առավել հստակ հիմքերի նախատեսումը ՀՀ Սահմանադրության տեքստում առաջընթաց քայլ է և լրացուցիչ երաշխիք, որ այդ իրավասությունը չչարաշահվի<sup>6</sup>: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել լրացուցիչ «արգելքներ» Նախագահի համար այս ինստիտուտի կիրառման գործընթացում: Այսպես՝ Օ.Օ. Միրոնովը նշում է, որ Պետական Դոմայի գլխին չպետք է կախված լինի իր իսկ արձակման դամոկլյան սուրը, այդ գործընթացը պետք է բարդացնել<sup>7</sup>: Սակայն, եթե այս հարցը դիտարկենք քաղաքական տեսանկյունից, գրտնում ենք, որ Նախագահի ձեռքում մնան լիազորության առկայությունն, ինքնին, նույնիսկ եթե այն չի կիրառվում, գապող հանգամանք է և առաջին հերթին ստիպում է խորհրդարանին աշխատել և համագործակցել գործադիր իշխանության հետ: Եթև

տեսական վերլուծության ենթարկենք այս ինստիտուտը, ապա հստակ կարող ենք առանձնացնել արձակման ինստիտուտի երկու ասպեկտ՝ կանխիչ և ռետրոսպեկտիվ: Այսինքն՝ կանխիչ գործառույթը կայանում է նրանում, որ ապահովում է, որպեսզի Սահմանադրությամբ նախատեսված արձակման հիմքեր չառաջանան, իսկ երկրորդ՝ ռետրոսպեկտիվ գործառույթի իմաստն արտահայտվում է այդ ինստիտուտի բուն կիրառման ժամանակ, երբ արդեն առկա է արձակման քվարկված հիմքերից որևէ մեկը: Վերջին դեպքում պառլամենտի արձակման ինստիտուտը գտնում է արդեն իր բուն կիրառությունը: Ազգային ժողովը նաև չի կարող արձակվել, երբ հարուցված է ՀՀ Նախագահին պաշտոնակ անելու հարցը:

Ընդհանուր առմամբ, գնահատելով 2005թ. սահմանադրական փոփոխությունները, կարող ենք նշել, որ ճշգրտվեցին ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունները, հստակեցվեցին իշխանությունների տարանջատման համակարգում վերջիններիս տեղը և դերը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի 1-ին մասը: Ընդ որում, պետք է նշել, որ անկախության առաջին տարիներին Հանրապետության Նախագահին ուներ այլ իրավական կարգավիճակ: Մասնավորապես, 1991թ. օգոստոսի 1-ի «ՀՀ Նախագահի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Նախագահը հանդիսանում է Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը և գլխավորում է Հանրապետության գործադիր իշխանությունը», ՀՀ Օրենքների ժողովածու, 1990-1995թթ., Եր., 1995, էջ 158:

<sup>3</sup> Սահմանադրության 117-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը ՀՀ Նախագահը կարող է Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն:

<sup>4</sup> Տե՛ս Хачатурян Г.М. Первая конституция Республики Армения. Ереван, 2001. С. 149.

<sup>5</sup> Տե՛ս Отв. ред. Страшун Б.А. Конституционное право зарубежных стран. 1-2 т. М., 2000. С. 488.

<sup>6</sup> Տե՛ս Дегтев Г.В. Становление и развитие института президентства в России. М., 2006. С. 124.

<sup>7</sup> Տե՛ս Миронов О.О. Конституция не может быть незаконной // Государство и право, 1998. С. 5-9. Սակայն չպետք է մոռանալ, որ հեղինակը մնան դիրքորոշում հայտնում է Ռուսաստանի Դաշնության երկարատև պառլամենտի վերաբերյալ: Եթև վաղաժամ արձակվում է Պետական Դոման, ապա Դաշնության խորհուրդը միաժամանակ նշանակում է նոր նախագահական ընտրություններ:

ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչարարական գլխավոր մասնագետ



ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Իրավաբանական անձանց առաջացումը

Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին խոսելիս, կայծում ենք, պետք է մի քանի խոսքով նախ նշել իրավաբանական անձանց առաջացման, դրանց զարգացման և տարատեսակների մասին:

Գոյություն ունեն իրավաբանական անձանց առաջացման մի քանի տեսակետներ:

Համաձայն տեսակետներից մեկի՝ իրավաբանական անձինք (կորպորացիաները) ի հայտ են եկել 15-17-րդ դարերում և արդյունք են տնտեսական փոփոխությունների՝ առևտրի, արհեստագործության, ծովային գործի զարգացման:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավաբանական անձանց սկզբնաղբյուրները պետք է փնտրել Հին Հունաստանում և Հռոմում: Հին հույների մոտ բավական զարգացած էր ծովային հաղորդակցությունը, և հույները, իրենց գաղութատիրական քաղաքականությունը իրականացնելիս, անկասկած օգտվում էին կղզեկտիվ համագործակցության տարրեր ձևերից:

Սակայն առավել հավանական է, որ իրավաբանական անձինք առաջին անգամ ի հայտ են եկել Հին Հռոմում: Հռոմեական տիրապետության ընդլայնման հետ միաժամանակ նախկին նահապետական քաղաքներ, երբ հռոմեական քաղաքացիները իրենց ստրուկների հետ միասին, զբաղվում էին հողագործությամբ, արագորեն սկսեցին ձևավորվել: Առանձին հռոմեական քաղաքացիների մոտ սկսեց կենտրոնանալ բավական մեծ հարստություն և առևտրային շրջանառություն: Այդ

հարստությունները հիմնականում կուտակվում էին ի հաշիվ ձեռնարկատիրական նախաձեռնությունների, որը համակել էր ողջ հասարակությանը:

Սովորաբար, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար շատ դեպքերում բավական էր նաև մեկ անձի ֆինանսական կապիտալը, սակայն, եթե ձեռնարկատիրական ռիսկը մեծ էր, կամ ծախսերը փակելու համար բավարար չէր սեփական կապիտալը, ապա կնքվում էին անձնական համաձայնագրեր՝ մեկ կամ մի քանի նույնպիսի հարուստ քաղաքացիների հետ: Հետևաբար, այդ ժամանակ ընկերակցությունների բնորոշ տեսակը անձնական ընկերակցություններն էին:

Միջին դարերում իրավաբանական անձանց նախատիպը հանդիսանում էին **առևտրային գիլդիաները**, որոնք կազմավորվում էին առանձին երկրներ առևտրային նպատակներով ճանապարհորդություններ կազմակերպելու համար: Այդպիսի ճանապարհորդությունները միշտ ուղեկցվում էին որոշակի ռիսկերով՝ հաղորդակցության վատ ուղիներ, ծովահեռներ, ավազակներ, կենցաղի վատ պայմաններ և այլն: Միայնակ առևտրականը անպաշտպան էր մնում ոչ միայն ճանապարհին, այլ նաև՝ օտար երկրում:

Այդ գիլդիաները մշակում էին համատեղ գործունեության պրակտիկա, և առևտրային քաղաքականները ենթարկվում էին որոշակի օրենքների: Գիլդիաները դեռ նպատակ չէին հետապնդում բնդհանուր համատեղ գործունեություն վարել, չկար ընդհանուր կապիտալ, թեև գոյություն ունեին ընդհանուր վճարումներ գիլդիաներին, որոնք, ճիշտ է, չնչին էին: Կրանք սուսկ նպատակ էին հետապնդում

դում գիլդիաների անդամների անհատական գործունեության համար հովանավորություն ձեռք բերելու և լավագույն պայմաններ ստեղծելու:

Եթե արտահայտվենք ժամանակակից տերմինալոգիայով, ապա այդ գիլդիաները ավելի շուտ հանդես էին գալիս որպես առևտրային իրավաբանական անձանց միություններ, այսինքն՝ իրենք շահույթ ստանալու նպատակ չէին հետապնդում, այլ սույլ պաշտպանում էին իրենց անդամների ընդհանուր շահերը: Թեև, պետք է նշել, որ ի տարբերություն ժամանակակից առևտրային իրավաբանական անձանց միությունների՝ գիլդիաները պատասխանատու էին իրենց անդամների պարտավորությունների համար:

Նշենք նաև, որ նույն մոտեցումն էր նաև **արհեստագործական համքարությունների** դեպքում, որոնք շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ էին, որտեղ միավորվում էին որոշակի արհեստով զբաղվող քաղաքացիներ: Ընդ որում, այդ համքարությունները, մեծամասամբ, իրենք էին կանոնակարգում համքարություն մուտք գործելու պայմանները և միայն համքարության անդամ դառնալուց հետո քաղաքացին իրավունք ուներ զբաղվելու տվյալ գործունեությամբ, այսինքն՝ ժամանակակից լեզվով ասած՝ կար գործունեության լիցենզավորման գաղափար, և այդ լիցենզիան տրամադրում էին հենց իրենք՝ համքարությունները:

Կարելի է ասել, որ դրանք հանդիսանում էին ներկայիս արհեստակցական միությունների նախատիպերը:

Տնտեսության զարգացման հետ միասին սկսեցին ի հայտ գալ գործունեության նոր ձևեր: Այսպես՝ առաջացան **ծովային ընկերակցությունները**: Դրանցում, ընկերակցության անդամների անձնական հարաբերությունները երկրորդական պլան էին մղվում. կարևորվում էին ֆինանսների հետ կապված հարաբերությունները: Ծովային ընկերակցության նպատակը բեռների փոխադրումն էր: Անձը, որը մտադրվել էր նավ կառուցել, կոչվում էր պատրոն: Պատրոնը հայտարարում էր նավի չափը և մասնակցության իր մասնաբաժնի չափը:

Ծախսերը ընդհանուր էին, մասնաբաժինների տեղերը նաև պատասխանատվություն էին կրում նավի վերանորոգման, հանդերձանքի և այլ անհրաժեշտ պարագաների գնման համար:

Նշենք նաև, որ **ժամանակակից առևտրային իրավաբանական անձինք**, որպես սոցիալական երևույթ, առաջացան այն ժամանակ, երբ ձևոնարկատիրությունը կարիք ունեցավ ֆինանսական մեծ ծախսերի: Շատերը այդ ժամանակ ցանկանում էին հիմնադրել իրենց գործը և ռիսկի դիմել իրենց կապիտալով, սակայն չէին ուզում իրենց վրա լիակատար պատասխանատվություն վերցնել այդ գործի արդյունքի համար, քանի որ վախենում էին սնանկացումից: Կորպորատիվ ձևը անձին, որը կապիտալ էր ներդրել ձեռնարկության մեջ, պահպանում էր այդ ձեռնարկության մեջ ներդրված կապիտալից բացի, այլ կորուստների ռիսկից: Այն իրավունք էր վերապահում գործերի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնել, թեև մասնակիցներին ազատում էր գործերի ամենօրյա ղեկավարման պատասխանատվությունից: Առևտրային իրավաբանական անձանց շրջանակներում անդամները կարող էին միասին կլիսել այն ռիսկերը, որոնք առանձին-առանձին նրանցից յուրաքանչյուրը չէր կարող ընդունել:

Հետագայում արդեն, կախված յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններից, իրավաբանական անձինք ստացան իրենց հետագա զարգացումը:

**2. Ժամանակակից իրավաբանական անձինք**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ

պատասխանող»:

Ներկայումս իրավաբանական անձինք դասակարգվում են երկու հիմնական խմբի՝ առևտրային և ոչ առևտրային:

Եթե իրավաբանական անձի գործունեության նպատակը շահույթ ստանալն է, և այն մասնակիցների մեջ բաշխելը, ապա ոչ առևտրային իրավաբանական անձանց գործունեությունը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում, իսկ շահույթ ստանալու դեպքում էլ այն չի կարող բաշխվել մասնակիցների միջև:

ՀՀ-ում առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների, առևտրային կոոպերատիվների և ընկերությունների ձևով:

Տնտեսական ընկերակցությունները կարող են հանդես գալ լիակատար կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ձևով:

Ընկերությունները կարող են հանդես գալ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ բաժնետիրական ընկերությունների ձևով, որոնք էլ, իրենց հերթին, լինում են բաց կամ փակ բաժնետիրական ընկերության տեսքով:

Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ոչ առևտրային կոոպերատիվների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Կարևոր է նշել, որ եթե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը շահույթ ստանալու նպատակ հետապնդող ընկերությունների ձևերը խստորեն մատնանշել է, ապա ոչ առևտրային իրավաբանական անձանց ձևերը խստորեն մատնանշված չեն, և այլ օրենքներով կարող են նոր ձևեր սահմանվել: Օրինակ՝ համատիրությունները նախատեսված չէին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, սակայն դրանց վերաբերյալ ընդունվեց առանձին օրենք, որը տվեց համատիրության կազմավորման և գործունեության կարգին վերաբերող սպառիչ պատասխաններ:

### 3. Իրավաբանական անձանց պետական գրանցման հասկացությունը

Նշենք, որ ձեռնարկատիրական գործունեությունը օրինական կարգավիճակ է ստանում պետական գրանցման ճանապարհով:

Պետական գրանցումը պետական համապատասխան լիազոր մարմնի կողմից ընդունված իշխանական ակտ է, որը հաստատում է ձեռնարկատիրական կազմավորման ստեղծման օրինականությունը և իրավունք է վերապահում վերջինիս իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն:

Պետական գրանցման նպատակը, իրավաբանական անձանց ստեղծման ժամանակ, օրենսդրության հնարավոր խախտումների կանխումն է և նոր հարկատուի մասին տեղեկությունների հավաքումը:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն արգելվում է: Նման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց պետական գրանցման համակարգը կրում է այսպես կոչված «գրանցող» բնույթ, այսինքն՝ իրավաբանական անձը կարող է ստեղծվել, եթե առկա է մեկ կամ մի քանի հիմնադիրների կամքը և որոշումը՝ համապատասխան գրավոր ձևով արտահայտված: Պետությունը սույլ կատարում է գրանցող մարմնի պարտականություն, այսինքն՝ ստուգում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը օրենքի պահանջներին: Ցանկացած այլ շարժառիթով, այդ թվում նաև՝ տնտեսական կամ այլ կերպ աննպատակահարմարության շարժառիթով իրավաբանական անձի գրանցումը մերժելը արգելվում է օրենքով:

Ըստ էության, իրավաբանական անձանց պետական գրանցումը ստեղծվող իրավաբանա-

կան անձի իրավունակության ճանաչումն է պետության կողմից:

Նշենք, որ իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից, այսինքն՝ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից: Իրավաբանական անձի պետական գրանցումը հավաստվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնի (այսուհետ՝ պետական ռեգիստր) համապատասխան ստորաբաժանման կողմից տրված գրանցման վկայականով: Ավելացնենք նաև, որ առևտրային իրավաբանական անձանց այլ վկայականը տրամադրում է պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումը, իսկ ոչ առևտրային իրավաբանական անձանց՝ պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը:

Իրավաբանական անձանց պետական գրանցումն ընդգրկում է՝

ա) իրավաբանական անձի պետական գրանցումը, որը գրանցվող (ստեղծվող) իրավաբանական անձի մասին օրենքով սահմանված տեղեկությունների գրառումն է պետական գրանցամատյանում,

բ) իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը, որը իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությանը կանոնադրության, վերակազմակերպման, ինչպես նաև իրավաբանական անձի ղեկավարի փոփոխությունների պետական գրանցումն է,

գ) իրավաբանական անձի լուծարման (գործունեության դադարման) պետական գրանցումը, որը գրանցված իրավաբանական անձի գոյության դադարեցման մասին պետական գրանցամատյանում գրառում կատարելն է:

### **3.1. Իրավաբանական անձանց սկզբնական պետական գրանցումը**

Համաձայն «Իրավաբանական անձանց

պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ իրավաբանական անձանց պետական գրանցման համար իրավաբանական անձինք ներկայացնում են՝

ա) իրավաբանական անձի հիմնադրի (հիմնադիրների) լիազորված անձի դիմումը,

բ) իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադրի (հիմնադիրների) ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը՝ ստորագրված նախագահի և քարտուղարի կողմից (բացառությամբ մեկ ֆիզիկական անձով հիմնադրվող իրավաբանական անձանց): Եթե հիմնադիրների կազմում առկա է իրավաբանական անձ, ապա անհրաժեշտ է ներկայացնել հիմնադիր իրավաբանական անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը,

գ) կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,

դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը,

ե) «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված տեղեկություն տրամադրող անձինք՝ նաև իրավաբանական անձին հանձնվող կամ վերջինիս կանոնադրական, կամ բաժնեհավաք կապիտալում ներդրվող գույքի օրինականության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով հանձնվող գույքի կազմը, չափը և ծագման աղբյուրները, եթե հանձնվող կամ ներդրվող գույքի արժեքը գերազանցում է 25 միլիոն դրամը:

Օտարերկրյա հիմնադիր (մասնակից) իրավաբանական անձով իրավաբանական անձինք պետական գրանցման համար, բացի վերոհիշյալ փաստաթղթերից, ներկայացնում են նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա ներդրողի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ վավերացված և

հայերեն քարգմանված:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պետական տուրքի չափը սահմանված է քաղաքին տուրքի 12-ապատիկի (12 000 ՀՀ դրամի), ոչ առևտրային իրավաբանական անձանց համար՝ 10-ապատիկի (10 000 ՀՀ դրամ), իսկ կանոնադրության փոփոխությունների պետական գրանցման համար՝ համապատասխանաբար 6-ապատիկի և 5-ապատիկի չափով:

Պետական ռեգիստր ներկայացվող փաստաթղթերը պետք է քավարարեն հետևյալ պահանջները՝

ա) մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի թերթերը պետք է լինեն կարված, համարակալված, ինչը պետք է ապահովի փաստաթղթի ամբողջականությունը.

բ) փաստաթղթերում պետք է նշված լինեն դրանք կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

գ) փաստաթղթերը չպետք է պարունակեն ջնջումներ կամ էական վնասվածքներ, հավելագրումներ, ջնջված բառեր, դատարկ և հետագայում լրացման համար նախատեսված չլրացված մասեր, շճանոթագրված ուղղումներ.

դ) փաստաթղթերի տեքստը պետք է գրված լինի սլարգ, հատակ և ընթեռնելի.

ե) միաժամանակ հայերեն և օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի տեքստերը պետք է շարադրվեն իրար հետևից կամ իրար կողքի, պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում վերևում գետեղվում է հայերեն տեքստը, ընդ որում՝ տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին.

զ) փաստաթուղթը պետք է, նշում պարունակի այն հաստատելու մասին կամ ձևակերպված լինի այն հաստատող փաստաթղթի հետ մեկ փաստաթղթի տեսքով.

է) մեկից ավելի թերթեր պարունակող փաստաթղթերը (փոխանցման ակտ, բաժանիչ հաշվեկշիռ) կարող են ներկայացվել էլեկտրոնային կրիչի տեսքով (բացառելով որևէ անձի կողմից փո-

փոխություններ կատարելու հնարավորությունը)՝ սույն հոդվածի «գ» ենթակետի պահանջներին համապատասխան.

ը) կանոնադրության (կանոնադրության փոփոխությունների) տիտղոսաբերքը պետք է նշում պարունակի հաստատման մասին, ներկայացված օրինակների քանակի ու օրինակի հերթական համարի, պետական գրանցման տվյալների մասին: Նշում կատարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Նշված պահանջներին չբավարարող փաստաթղթերը պետական ռեգիստրի կողմից վերադարձվում են առանց րճնարկման:

Իրավաբանական անձի պետական գրանցումը կարող է մերժվել՝

ա) իրավաբանական անձի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտման դեպքում.

բ) նրա կանոնադրության՝ օրենքին անհամապատասխանության դեպքում.

գ) իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում կանոնադրությունների հետ փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը չներկայացնելու, ինչպես նաև դրանցում (կանոնադրությունում, փոխանցման ակտում, բաժանիչ հաշվեկշիռում) վերակազմակերպված իրավաբանական անձի պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայության դեպքում:

Ընդ որում, իրավաբանական անձի գրանցման, փոփոխությունների, վերակազմակերպման և իրավաբանական անձի գործունեության դադարեցման պետական գրանցման մերժումը պետք է լինի պատճառաբանված և հղում պարունակի օրենքի այն կոնկրետ նորմերին, որոնց պահանջները խախտվել են: Իրավաբանական անձի գրանցումն այն ստեղծելու աննպատակահարմարության շարժառիթով մերժել չի թույլատրվում:

Պետական գրանցումը մերժելը, ինչպես նաև պետական գրանցումից խուսափելը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Կարևոր է նշել նաև, որ կթև բոլոր

փաստաթղթերը ներկայացնելու մասին գրանցամատյանում գրառում կատարելուց հետո իրավաբանական անձի, նրա կանոնադրությունում կատարված փոփոխությունների պետական գրանցումը սահմանված ժամկետներում չի մերժվում, ապա գրանցումը համարվում է կատարված և ոչ ուշ, քան համապատասխան գրանցման համար նախատեսված ժամկետի լրանալուց հետո մեկ օրվա ընթացքում դիմողին տրվում է համապատասխան վկայական (նկրդիր):

### **3.2. Իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցումը**

Ինչպես արդեն նշել ենք, իրավաբանական անձանց գրանցման տեսակներից մեկը իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն է, որը ներառում է իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությանը կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ղեկավարի փոփոխությունների պետական գրանցումը:

Վերոհիշյալ դեպքերում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում են ներկայացվում՝

ա) դիմում,

բ) կանոնադրությունում կատարված փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև կանոնադրության փոփոխությունների, լրացումների, նոր խմբագրությանը կանոնադրության հաստատման մասին իրավասու մարմնի որոշումը,

գ) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությանը կանոնադրությունը),

դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի փոփոխման (նշանակման, ընտրելու) դեպքում ներկայացվում է նաև իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը:

Պետական ռեգիստրի տարածքային ստո-

րաբաժանում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքների պահանջներին:

Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարը փոփոխությունների մասին տեղեկությունները լրացնում է քարտերում, անհրաժեշտության դեպքում կողմորում է տեղեկությունները, ստորագրում, կնքում է քարտերը և գրառում է անհրաժեշտ տեղեկություններ պետական գրանցամատյանում ու դիմողին տալիս է պետական գրանցման վկայականի հերթական ներդիրը՝ համապատասխան գրառում կատարելով պետական գրանցման վկայականում:

Փոփոխությունների պետական գրանցումը համարվում է կատարված՝ քարտում լրացված տեղեկությունները պետական գրանցամատյանում գրառելու պահից:

### **3.3. Իրավաբանական անձանց վերակազմակերպմանը պայմանավորված պետական գրանցումները**

Իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում (բացառությամբ վերակազմավորման դեպքերի) սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են պետական ռեգիստրի կենտրոնական մարմին, որն էլ կատարում է համապատասխան գրառումը:

Իրավաբանական անձի վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման դեպքում սահմանված փաստաթղթերը ներկայացվում են պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում:

Համաձայն «Իրավաբանական անձանց մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ իրավաբանական անձնաց վերակազմակերպման ժամանակ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) միաձուլման դեպքում՝

- դիմումները,

- միաձուլվող իրավաբանական անձանց հիմնա-



ղիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված մարմինների որոշումները,

- փոխանցման ակտերը,
- միաձուլման պայմանագիրը,
- միաձուլվող իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականները,

- հիմնադիր (միաձուլվող իրավաբանական անձանց մասնակիցների համատեղ) ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը,

- կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,

- պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- բ) միացման դեպքում՝
- դիմումները,
- միացող իրավաբանական անձանց հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված մարմինների որոշումները,

- փոխանցման ակտը (ակտերը),
- միացման պայմանագիրը (պայմանագրերը),
- միացող իրավաբանական անձի (անձանց) պետական գրանցման վկայականը (վկայականները),

- միացմանը մասնակցող իրավաբանական անձանց մասնակիցների համատեղ ընդհանուր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը,

- կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),

- պետական տուրքի վճարման անդորրագիրը,
- գ) բաժանման դեպքում՝
- դիմումները,

- բաժանվող իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված մարմնի որոշումը,

- բաժանիչ հաշվեկշիռը,
- բաժանվող իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը,

- հիմնադիր (բաժանման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց) ժողովների (հա-

մագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունները,

- կանոնադրությունները՝ առնվազն երկու օրինակից՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,

- պետական տուրքի վճարման անդորրագրերը,

դ) առանձնացման դեպքում՝

- դիմումները,
- առանձնացման ճանապարհով վերակազմակերպվող իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված մարմնի որոշումը,

- բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռը,

- առանձնացման ճանապարհով վերակազմակերպվող իրավաբանական անձի կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),

- հիմնադիր (առանձնացման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձի կամ անձանց) ժողովների (համագումարների կամ օրենքով սահմանված այլ մարմինների) արձանագրությունները,

- կանոնադրությունը (ներք) առնվազն երկու օրինակից՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,

- պետական տուրքի վճարման անդորրագրերը,

ե) վերակազմավորման դեպքում՝

- դիմումները,

- վերակազմավորվող իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշումը,

- փոխանցման ակտը,

- վերակազմավորման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձի հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը,

- կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից,

- վերակազմավորվող իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը,

- պետական տուրքի վճարման անդորրագիրը:

**3.4. Իրավաբանական անձի լուծարման գործընթացի պետական գրանցումը**

Իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի ղիմումի, որոշման և մամուլում հրապարակված համապատասխան հայտարարության հիման վրա պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումը պետական գրանցամատյանում գրառում է տեղեկություններ սովյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին, որի վերաբերյալ դիմողին արվում է պետական գրանցման վկայականի հերթական ներդիր:

Լուծարվող իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը, լուծարման գործընթացն ավարտելուց հետո, հաստատված լուծարման հաշվեկշռի հետ միասին ներկայանում է պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում և ներկայացնում ներքոհիշյալ փաստաթղթերը լուծարման պետական գրանցում կատարելու համար՝

- ա) ղիմում,
- բ) իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին,
- գ) տեղեկանքներ հարկային մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին,
- դ) ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ նաև տեղեկանք լիազորված պետական կառավարման մարմնից՝ ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրվողների (ապահովադիրների), ապահովագրված անձանց, շահառուների և պետության (միայն պետական տուրքի մասով) նկատմամբ պարտավորությունների բացակայության մասին,
- ե) կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ,

տասխան փաստաթուղթ,  
զ) պետական գրանցման վկայականը,

Լ) յի կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման մասին:

Պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքի պահանջներին:

Եթե գրանցման հայտի հետ չի ներկայացվել տեղեկանքը հարկային պարտավորությունների վերաբերյալ, ապա պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը եռօրյա ժամկետում հարցում է ուղարկում հարկային մարմիններին՝ վերջիններիս նկատմամբ իրավաբանական անձի պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում է ստացականով: Հարկային մարմինները պարտավոր են պատասխանել հարցմանն այն ուղարկելու օրվանից 30 օրվա ընթացքում, այլապես դիտվում է, որ իրավաբանական անձը չկատարված հարկային պարտավորություններ չունի:

Նույն կերպ է ընթանում նաև, եթե լուծարվողը ապահովագրական ընկերություն է և չի ներկայացրել համապատասխան տեղեկանքը:

Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո, լուծարման պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումն ղեկավարն անհրաժեշտ տեղեկությունները լրացնում է բարտերում, ստորագրում ու կնքում է դրանք, և լուծարումը գրանցվում է պետական գրանցամատյանում:

Իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարեցված, այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից, ինչի մասին արվում է տեղեկանք:

Իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի լուծարման գրանցման համար պետական տուրք չի գանձվում:

#### 4. Առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման առանձնահատկությունները

Թեև «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում խոսք չկա առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման ժամանակ ֆիրմային անվանման որոշման պարտադիր լինելու մասին, սակայն «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Այնչևև առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձի պետական գրանցումը իրավաբանական անձի ֆիրմային անվանումը պետք է գրանցվի Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչությունում»:

Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո իրավաբանական անձն իրականացնում է իր գործունեությունը և գանազանվում այլ իրավաբանական անձանցից:

Համաձայն նույն օրենքի՝ ֆիրմային անվանումը պետք է բովանդակի իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը բնորոշող բառեր և տարբերակող նշանակության գոնե մեկ հատուկ (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում) կամ հասարակ անուն: Ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաև իրավաբանական անձի գտնվելու վայրի անվանումը, նրա գործունեության բնույթը բնորոշող բառեր, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք նրա հիմնադիրները կամ մասնակիցները համարում են անհրաժեշտ: Բացի այդ, տնտեսական ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է պարունակի «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերն ու ընկերակցության բոլոր մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները) կամ ընկերակցության մասնակիցներից (լիակատար ընկերներից) առնչված մեկի անունը (անվանումը)՝ ավելացրած «և ընկերներ» ու «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը: Առևտրային կոոպերատիվի ֆիրմային

անվանումը պետք է ցուցում պարունակի դրա գործունեության հիմնական նպատակի մասին:

Ֆիրմային անվանման գրանցման հայտը իրավաբանական պետական ռեգիստր ներկայացնում է իրավաբանական անձի հիմնադիրներին ներկայացնող լիազորված անձը կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմինը:

Հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում ֆիրմային անվանման գրանցման մասին, որի մեջ նշվում են գրանցման ներկայացված ֆիրմային անվանման նախընտրելի տարբերակը (ները), դրա (նց) հապավումը կամ կրճատ ձևը (եթե այդպիսին կա), հայտատուի հասցեն,

բ) գրանցման ներկայացված ֆիրմային անվանման բացատրությունը, եթե այն հայերեն հասկանալի չէ:

Հայտին կցվում են՝


ա) եթե օգտագործվել է հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը՝ այդ անձի կամ նրա ժառանգների համաձայնությունը,

բ) եթե օգտագործվել են «Հայ», «Հայաստան», «Հայկական» բառերն ու դրանց թարգմանությունները, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների անվանումները, ինչպես նաև ֆիրմային անվանումների մեջ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը՝ նրա մահվան և ժառանգներ չունենալու դեպքում, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրված համապատասխան թույլտվությունը,

գ) լիազորագիր, եթե հայտը ներկայացվում է հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով,

դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ավելացնենք, որ համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի ֆիրմային անվանման գրանցման համար պետական տուրքի չափը սահմանված է բազային տուրքի 5-ապատիկի չափով, այսինքն՝ 5000 ՀՀ դրամ, բացառությամբ, եթե կառավարության կողմից սահմանված կարգով թույլատրվել է օգտագործել «Հայ», «Հայաստան»,



«Հայկական» բառերն ու դրանց թարգմանությունները: Այս դեպքում վճարվում է նաև տարեկան տուրք 600 000 ՀՀ դրամի չափով:

Համաձայն նույն օրենքի՝ պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումը ոչ ուշ, քան ֆիրմային անվանման դիմումը ստանալուց մեկ օր հետո այն ներկայացնում է արտոնագրային վարչություն, որն էլ մեկօրյա ժամկետում պարտավոր է կատարել ֆիրմային անվանման գրանցում կամ տրամադրել համապատասխան պատճառաբանված մերժում:

Ըստ նույնի, քանի որ ֆիրմային անվանման որոշումը արդեն իսկ դրա գրանցումից ստանում է պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումը, ապա «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում այն որպես դիմումատուի կողմից ներկայացվող համապատասխան փաստաթուղթ չի նշվում:

Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետական ռեգիստր ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը պետք է կատարի համապատասխան պետական գրանցում: Եթե պետական գրանցման (ստեղծման) համար ներկայացված են մնուշային ձևի փաստաթղթեր, որոնք պետք է անվճար տրամադրվեն պետական ռեգիստրի կողմից, ապա պետական գրանցումն իրականացվում է ոչ ուշ, քան երկու օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է հետևյալ սխեմայով պատկերել առևտրային իրավաբանա-

կան անձի պետական գրանցման ընթացակարգը.

Կարևոր է նշել, որ թեև իրավաբանական անձի պետական գրանցումը վերջինիս արդեն իսկ օժտում է համապատասխան իրավունակությամբ, սակայն գործունակություն ձեռք բերելու համար վերջինս դեռ պետք է ստանա երկու կարևոր հատկանիշ՝ այն պետք է գրանցվի դիմումը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում՝ կանոնադրության, ռեգիստրի վկայականի, հարկային կողի պատճենների և պետական տուրքի մուծման անդորրագրերը ներկայացնելու դեպքում՝ հարկային մարմնում ստանալով հարկային կող, պատվիրի և ստանա կնիք: Հարկային մարմինը համապատասխան փաստաթղթերի հիման վրա դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում պարտավոր է տրամադրել հարկային կող: Ընդ որում, որևէ վճարում կամ պետական տուրք դրա համար նախատեսված չէ: Հարկային կողը ստնալուց հետո իրավաբանական անձն արդեն կարող է դիմել կնիքը պատվիրելու համար: Կնիքի պատվիրման թույլտվությունը տրամադրում է ՀՀ ոստիկանության հասարակական կարգի և անվտանգության վարչությունը՝ համապատասխան դիմումը ստանուց հետո մեկ օրվա ընթացքում՝ կանոնադրության, պետական ռեգիստրի վկայականի, հարկային կողի պատճենների և պետական տուրքի մուծման անդորրագրերը ներկայացնելու դեպքում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կնիքի պատվիրման համար պետական տուրքը սահմանված է բազային դրույրաչափի 6-ապատիկի չափով (6 000 ՀՀ դրամ): Թույլտվությունը ստանալուց հետո իրավաբանական անձը

արդեն կարող է պատվիրել կնիքը: Ներկայումս ՀՀ-ում գործում է կնիքի պատվիրման մի քանի արտադրամաս՝ «Կնիք» ՓԲԸ-ն, «Կնիքների պատվիրման արտադրամաս» ՍՊԸ-ն և այլն: Կախված կնիքի ստանալու ժամանակահատվածից՝ կնիքի պատվիրումը կարժեճա 5800-ից մինչև 21500 ՀՀ դրամ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում առևտրային իրավաբանական անձի գրանցման հետ կապված ամբողջ գործընթացը կարելի է կատարել 7-10 աշխատանքային օրվա ընթացքում, ներառյալ նաև կնիքի պատվիրումը և ստացումը, իսկ անհրաժեշտ նվազագույն ծախսերը կկազմեն մոտավորապես 45000 ՀՀ դրամ:

Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում այդ գործընթացը շատ ավելի բարդ է և աշխատատար: Այսպես, համաձայն ՌԴ օրենսդրության՝ գրանցող մարմնին պետք է ներկայացվեն հիմնադիր պայմանագիրը, հիմնադիր ժողովի որոշումը, կանոնադրությունը, իրավաբանական անձի գտնվելու վայրի մասին տեղեկանք, ֆիրմային անվանման որոշումը, պետական տուրքի մուծման անդորրագիրը, հիմնադիրների մասին համապատասխան տեղեկություններ: Եթե այդ փաստաթղթերը ներկայացված են ամբողջությամբ և ճիշտ են, ապա գրանցող մարմինը տալիս է ժամանակավոր գրանցման վկայական, որի հիման վրա հիմնադիրները պետք է դիմեն վիճակագրական ծառայություն՝ ձեռնարկությունների և կազմակերպությունների ընդհանուր դասակարգչի կողմից ստանալու համար, պատվիրեն կնիք, հաշվառման կանգնեն կենսաթոշակային մարմիններում, բժշկական և սոցիալական ապահովագրության մարմիններում, հարկային տեսչությունում, ստանան տեղեկանքներ բոլոր վերոհիշյալ կազմակերպություններից, բացեն բանկում հաշվեհամար և մուծում կատարեն կանոնադրական կապիտալի առնվազն հիսուն տոկոսի չափով, ստանան համապատասխան տեղեկանք և կրկին վերոհիշյալ բոլոր փաստաթղթերով դիմեն գրանցող մարմնին, որն էլ 30 օրյա ժամկետում պարտավոր է տրամադրել մշտական գրանցման վկայական:

Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, ՀՀ-ում չի պահանջվում հիմնադրի պայմանագրի ներկայացումը, գտնվելու վայրի առկայությունը հիմնավորող փաստաթղթի, կանոնադրական կապիտալի մուծման անդորրագրի ներկայացումը գրանցող մարմնին, բացակայում է ձեռնարկությունների և կազմակերպությունների ընդհանուր դասակարգչի կողմից ստանալու անհրաժեշտությունը, հարկային մարմնի հետ միաժամանակ կազմակերպությունը հաշվառվում է նաև կենսաթոշակային մարմիններում: Բացակայում է ժամանակավոր գրանցման գաղափարը և ամենակարևորը՝ ՀՀ-ում գրանցող մարմնին գրանցման համար տրամադրված է 2-5 օր, իսկ Ռուսաստանում՝ 30 օր:

## **5. Ոչ առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման առանձնահատկությունները**

### **5.1. Հասարակական կազմակերպությունների պետական գրանցման առանձնահատկությունները**

Հասարակական կազմակերպության պետական գրանցումը, ինչպես նաև կազմակերպության կանոնադրության փոփոխությունների ու լրացումների կամ նոր կանոնադրության պետական գրանցումը և կազմակերպության լուծարման (գործունեության դադարման) պետական գրանցումն իրականացվում է իրավաբանական անձանց պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով՝ սակայն հաշվի առնելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Այսպես, կազմակերպությունը պետական գրանցման նպատակով պետական գրանցման մարմին է ներկայացնում՝

- 1) պետական գրանցման մասին դիմում,
- 2) կազմակերպության հիմնադիրների ժողովի արձանագրությունը՝ կազմակերպության կանոնադրության հաստատման, պետական գրանց-

ման նպատակով պետական գրանցման մարմին դիմելու և կազմակերպության լիազորած անձի ընտրության մասին որոշումներով, որոնցից պետական գրանցման նպատակով պետական գրանցման մարմին դիմելու մասին որոշումը պետք է ընդունված լինի վերոհիշյալ փաստաթղթերը պետական գրանցման մարմին հանձնելու կամ առաքելու օրվանից ոչ ավելի վաղ, քան 60 օրացուցային օր առաջ.

3) հիմնադիրներին, իսկ եթե նրանց թիվը հինգից ավելի է, ապա հիմնադիրներից առնվազն հինգի, ինչպես նաև կազմակերպության լիազորած անձի անձնագրային տվյալները՝ անունը, ազգանունը (անձի ցանկության դեպքում՝ նաև հայրանունը), ծննդյան օրը, ամիսը և տարին, անձնագրի սերիան, համարը և մարմինը, որի կողմից տրված է անձնագիրը, հաշվառման հասցեն, հեռախոսների համարները, էլեկտրոնային հասցեն,

4) կանոնադրության առնվազն երկու օրինակ.

5) պետական գրանցման համար մուծված պետական տուրքի անդորրագիրը.

6) «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկություն տրամադրող անձինք՝ նաև իրավաբանական անձին հանձնվող գույքի օրինականության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով հանձնվող գույքի կազմը, չափը և ծագման աղբյուրները, եթե հանձնվող գույքի արժեքը գերազանցում է 25 միլիոն դրամը:

Պետական գրանցման մարմինը անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու մասին գրանցման մատյանում գրառում կատարելուց հետո՝ քսանմեկ օրացուցային օրվա ընթացքում, պարտավոր է քնննարկել կազմակերպության պետական գրանցման մասին դիմումը և գրանցել կազմակերպությունը կամ մերժել նրա գրանցումը: Եթե պահանջվող բոլոր փաստաթղթերը կամ ներկայացված չեն, կամ անընթեռնելի են, կամ դրանցում առկա են ոչ բովանդակային թերություններ, ապա պետական գրանցման մարմինը յոթ օրացուցային օրվա ըն-

թացքում այդ մասին գրավոր հայտնում է կազմակերպությանը: Այդ դեպքում պետական գրանցման մասին դիմումի քննարկման համար սահմանված ժամկետը կասեցվում է, բայց ոչ ավելի, քան տասը օրով:

Կազմակերպության պետական գրանցումը մերժվում է, եթե չեն պահպանվել օրենքի պահանջները, այդ թվում՝

1) պահանջվող բոլոր փաստաթղթերը կամ ներկայացված չլինելու, կամ անընթեռնելի լինելու, կամ դրանցում ոչ բովանդակային թերություններ լինելու մասին կազմակերպությանը տեղյակ պահելուց հետո՝ տասը օրացուցային օրվա ընթացքում, կազմակերպությունը չի վերացրել այդ թերությունները և չի դիմել պետական գրանցման մասին իր դիմումը քննարկումից հանելու մասին,

2) կազմակերպության անվանումը, կրճատ անվանումը (անվանման հապավումը) և խորհրդրդանիշները չեն համապատասխանում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին,

3) ներկայացված կանոնադրությունը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին:

